ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1956 Общественные науки

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆԻ «ՎԱՐԴԱՆԱՆՔ»-Ը ՊԱՏՄԱՔՆՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԻՑ

«Պատմական մեծ ժառանգության որոնումների մեջ գրականությունը դիմում է պատմական վեպին» — գրել է սովետական մեծանուն գրող Ալեքսեյ Տոլստոյը[1].

Գեղարվեստական մտքի զարգացումն ստեղծագործական այդ որոնումների ուղիով է ընթացել նաև մեզանում՝ սովետահայ գրականության մեջ։ Բայց այդ ուղին շատ բարդ ու դժվարին է եղել՝ մանավանդ այն բանի հետևանքով, որ մեր գրականագիտության ու գեղարվեստական գրականության մեջ, ինչպես և պատմական գիտության բնագավառում, հայ ժողովրդի պատմական անցյալի նկատմամբ եղել է ստեղծագործական մտքի առաջընթացը խանգարող երկու սխալ տենդենց, որոնք տարբեր շրջաններում հաջորդաբար դրսևորվել են մեկի ուժեղ, մեկի թիչ նկատելի չափով, բայց գրեթե միշտ էլ եղել են.— դրանցից մեկը անցյալի իդեալականացման, նացիոնալ-ռոմանտիկական տենդենցն է, որը բուրժուական նացիոնալիզմի ռեցիդիվների արտահայտությունն է,— մյուսը՝ պատմական անցյալի պրոգրեսիվ տրադիցիաների հակահայրենասիրական նիհիլիստական ժխտման տենդենցը, որը վուլգար սոցիոլոգիզմի, պակրովսկիականության ու ռապպականության արտահայտությունն է։ Այդ երկու վնասակար տենդենցներն էլ տարբեր խորությամբ ու ծավալով գոյություն են ունեցել ընդհուպ մինչև վերջին ժամանակները և սխալ կլիներ ասել, թե դրանք արդեն արմատահանվել են և այլևս չեն դրսևորվի թե՛ գեղարվեստական գրականության ու գրականագիտության և թե՛ պատմագիտության բնագավառում։

Վերջերս հրատարակված «Վարդանանց պատերազմը» և Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը»[2] աշխատության արժանիքներից մեկն այն է, որ նա ոչ միայն զերծ է վերոհիշյալ վնասակար տենդենցներից, այլև որոշակիորեն ուղղված է նրանց դեմ։ Հեղինակն իր թեմայի սահմաններում այլևայլ համապատասխան առիթներով ճիշտ ու դիպուկ քննադատում է այդ տենդենցների դրսևորումները թե՛ գրականագիտության և թե՛ պատմագիտության բնագավառում՝ հետևելով մարքս-լենինյան պատմականության սկզբունքին։

Վ. Նալբանդյանի աշխատությունը նվիրված է մի կարևոր, բայց և բարդ պրոբլեմի, որն սովետահայ գրականագիտության մեջ միայն շոշափված է, բայց լրջորեն ու բազմակողմանիորեն դեռ չի ուսումնասիրված։ Ուստի Նալբանդյանի աշխատությունը ուշագրավ և արժեքավոր է նախ, իբրև առաջին լուրջ քայլը մեր գրականագիտության մեջ տվյալ պրոբլեմի խորը գիտական ուսումնասիրության բնագավառում։

Ընտրելով այս թեման, հեղինակը դրանով իսկ սոցիալիստական ռեալիզմի պատմավեպի ուսումնասիրության հարցը մեր գրականագիտության մեջ դնում է արժանավայել բարձրության վրա, հարվածելով պատմավեպի նկատմամբ վնասակար նիհիլիստական այն տենդենցը, որը դեռ շարունակում է գոյություն ունենալ մեր գրական-քննադատության ու գրականագիտության մեջ։

Սոցիալիստական ազգերի մեծ Միության իրավահավասար անդամը հանդիսացող ժողովուրդը, որն ունի բազմադարյան պատմական անցյալ, չի կարող չունենալ նաև իր հարուստ պատմավեպագրությունը. անցած դարերի պատմական ուղու բախտորոշ ու հերոսական և կամ ողբերգական դրվագները պատկերող պատմավեպը, որը սոցիալիստական ռեալիզմի գրականության կարևորագույն ժանրերից մեկն է։

Ահա թե ինչու մեր կարծիքով Վ. Նալբանդյանի աշխատությունը պետք է գնահատել ու արժեքավորել նաև տվյալ պրոբլեմին սկզբունքային կարևորություն տալու առումով, իհարկե, ոչ անկախ նրա փաստական գիտական արժեքից։ Այս գծով առաջին լուրջ ու ծավալուն աշխա-

---

[1] Ալ. Տոլստոյ, *Սովետական գրականության քառորդ դարը, 1943, էջ 30։*

[2] Վ. Նալբանդյան, «Վարդանանց պատերազմը» և Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը», *1955, Հայպետհրատ։*

տությունը լինելով, Վ. Նալբանդյանի հետազոտությունը առիթ է տալիս, որպեսզի մեր գրականագիտությունն այսուհետև ավելի խորը և տևականորեն զբաղվի պատմավիպագրության ու պատմա-գեղարվեստական գրականության զարգացման հարցով, իհարկե, ամենևին ոչ ի հաշիվ կամ ի վնաս արդիականության թեմատիկայի զարգացմանը վերաբերող խնդիրների և առանց մեկը մյուսին հակադրելու։

Ճիշտ է վարվել հեղինակը, որ իր աշխատության մեջ՝ նախքան «Վարդանանք»-ի վերլուծությանն անցնելը՝ համառոտակի բնութագրում է Դեմիրճյանի մինչ «Վարդանանք»-յան պատմագեղարվեստական երկերը (նախահոկտեմբերյան շրջանի «Վասակ» դրաման, և ապա սովետական շրջանում գրված «Գիրք ծաղկանց», «Երկիր Հայրենի»-ն և այլն)։ Դրանով նշվում են «Վարդանանք»-ի ստեղծման նախադրյալները։ «Վարդանանքը» դիտվում է հեղինակի ստեղծագործական հղացումների ու գործերի բնական ընթացքի մեջ, իբրև Դեմիրճյանի ամբողջ ստեղծագործական կյանքի օրգանական արտահայտություններից մեկը, նրա պատմափիլիսոփայական խոհերի ու որոնումների մի կարևոր հանգուցակետը։

Աշխատության առաջին գլխում հեղինակը հիմնավորում ու հաստատում է պատմավեպի ժանրի կենսական անհրաժեշտությունը սոցիալիստական ռեալիզմի գրականության մեջ, ըստ որում և ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական սովետահայ գրականության մեջ։

Հեղինակը Դեմիրճյանի «Վարդանանքը» գնահատելիս հաշվի է առել ընդհանուր սովետական պատմավիպագրության զարգացման հարուստ փորձը, ինչպես և այդ փորձի տիպական ընդհանրացումները մասնավորապես ռուսական ժամանակակից գրականագիտության մի շարք ներկայացուցիչների արժեքավոր մենագրական աշխատություններում ու հոդվածներում, և այդ ամենի հիման վրա, նշելով սովետահայ պատմավեպի այն հիմնական առանձնահատկություններն ու բնորոշ գծերը, որոնցով սոցիալիստական ռեալիզմի պատմավեպը որակապես տարբերվում է նախասովետականից։ Հեղինակը համոզիչ կերպով ցույց է տալիս Դ. Դեմիրճյանի կատարած ստեղծագործական խիզախությունը, նրա նորարարությունը, սոցիալիստական ռեալիզմի կիրառումը մեր ժողովրդի հեռավոր պատմական կյանքի գեղարվեստական պատկերման գործում։

Հեղինակը բավական հանգամանորեն է քննության առել Դեմիրճյան պատմաբանի հայացքը, նրա կոնցեպցիան «Վարդանանց պատերազմի» պատմության նկատմամբ։ Դեմիրճյանի պատմագիտական հետազոտությունը («Վարդանանց պատերազմը»), որը նախորդել է հեղինակի պատմավեպին, լայն ուշադրության է արժանացել թե՛ իբրև այդպիսին՝ այսինքն անկախ վեպից, իբրև 450—451 թթ. պատմական իրադարձությունների մի ինքնուրույն ուսումնասիրություն, և թե՛ մանավանդ, իբրև հեղինակի պատմահայեցողության արտահայտություն, որը կազմում է «Վարդանանք»-ի պատմագիտական հիմքը։

Վ. Ս. Նալբանդյանի աշխատության գլխավոր արժանիքներից մեկն այն է, որ այնտեղ «Վարդանանք» պատմավեպը քննության է առնված, նաև, որպես արվեստի գործ՝ սովետական պատմավիպագրությանը ներկայացվող դաղափարական-էսթետիկական պահանջների տեսակետից։ Վեպի բաղմակողմանի վերլուծությունը հեղինակը կատարել է՝ ելնելով գեղարվեստական տիպականացման ճիշտ ըմբռնումից։ «Վարդանանք»-ի գաղափարական ու գեղագիտական վերլուծության մեջ բացառված են թե՛ ֆորմալիզմի և թե՛ վուլգար սոցիոլոգիզմի տարրերը, որոնք այս կամ այն չափով իրենց զգացնել են տալիս մեր գրականագիտության մեջ։

Այց հարկ է որպես թերություն նշել այն, որ աշխատության մեջ մի առանձին ամբողջական հատված (գոնե մի տաս էջի չափով) չկա, ուր քննության առնվեր հայ կլասիկ պատմավիպագրության արժևորման, հայ պատմավիպագրական տրադիցիաների հարցը, ըստ որում և այն, թե մենք ինչ ենք ժառանգում անցյալից սովետական պատմավիպագրության ստեղծման ու հետագա զարգացման գծով, ինչն է արժեքավորը, պրոգրեսիվ, ուրեմն և ընդունելի անցյալի պատմավիպագրությունից մեր նոր, սոցիալիստական ազգային պատմավիպագրության համար։ Հեղինակը բավականացել է քննության առնել միայն Վարդանանց պատերազմի թեման նախասովետահայ պատմագեղարվեստական գրականության մեջ, մի կարևոր խնդիր, որ կատարված է հաջողությամբ, թեև ոչ լիովին անառարկելի կերպով։

Հեղինակը միանգամայն ճիշտ է վարվել, որ Դեմիրճյանի պատմավեպի վերլուծումը նախագծելիս և իրականացնելիս՝ առավել ուշադրություն է դարձրել և իր աշխատության հիմնական մասի՝ 2-րդ գլխի գերակշիռ բաժինը նվիրել է երեք հիմնական հարցերի, որոնց պատմական ու գաղափարական և գեղարվեստական մեկնաբանությունն էլ կազմում է վեպի առանցքային պրոբլեմը։ Այդ երեք հարցերը վերաբերում են՝ ժողովրդի կերպարին, Վարդանի ու Վարդանանց կերպարին և ապա Վասակի ու Վասակյանների կերպարի ճշմարտացի պատկերմանը։

Աշխատության մեջ համոզիչ կերպով ցույց է տրված (մասնավորապես 2-րդ գլխի առաջին և երկրորդ ու երրորդ ենթաղլուխներում), որ Դեմիրճյանն իր տաղանդի մեծ ուժով ու հմտությամբ պատմավիպագրական լայն կտավի վրա՝ գեղարվեստորեն մարմնավորել է իր այն ճիշտ հայացքը, ըստ որի Վարդանանց պատերազմն իր էությամբ ժողովրդա-ազատագրական պատերազմ էր, որի պատմությունը, սակայն, դարերի ընթացքում մթագնված է եղել եկեղեցական կրոնական իդեոլոգիայով։

Նալբանդյանը ցույց է տվել, որ անվանի գրողը՝ հիմնավորապես մերժելով կղերական ու բուրժուական-նացիոնալիստական կոնցեպցիաները Վարդանանց պատերազմի վերաբերմամբ, իր մեծ էրուդիցիայով՝ նախ պատմագիտորեն և ապա գեղագիտորեն, խոսքի արվեստի միջոցով՝ լայնորեն բացահայտել է այդ պատերազմի իսկական պատճառը և բնույթը, «հատկապես շեշտելով այն դաղափարը, որ Վարդանանց պատերազմի բուն էությունն է։ Դա պատերազմի ժողովրդականությունն էր», կրկնակի ու եռակի ճնշման ենթակա աշխատավոր ժողովրդի բախտորոշ դերը պատերազմում։

«Վարդանանց»-ն իրավացիորեն դնահատված է որպես պատմավեպ ժողովրդի, նրա մղած ազատագրական պատերազմի մասին, որպես հերոսական վիպերգություն, ժողովրդի. իբրև ինքնուրույն ուժի, պատմական իրադարձությունների բախտը որոշող գլխավոր ուժի մասին։

Աշխատության մեջ առանձին ուշադրության արժանի նորույթ է «Վարդանանց»-ի վերլուծմանը նվիրված բաժնի «Ժողովուրդների բարեկամությունը» հատվածը (էջ 105—113), ուր հեղինակը ցույց է տալիս. «Վարդանանց»-ի, որպես սոցիալիստական ռեալիզմի պատմավեպին հատուկ մի գիծը՝ անդրադարձնելու տվյալ ժողովրդի (ներկա դեպքում հայ ժողովրդի) պատմական անցյալում մեծ, բախտորոշ իրադարձությունների ժամանակ, դրսևորված, հայրենակից ու բախտակից ժողովուրդների բարեկամությունն ու զինակցությունն օտարերկրյա նվաճողների դեմ մղված ազատագրական պայքարում։

Ժողովրդի կերպարի ճշմարտացի պատկերման առումով բնված է նաև վեպի պատմական բովանդակության բոլոր մյուս հարցերը, դրանցից առաջին հերթին պատերազմի զորավարի՝ Վարդանի ու Վարդանանց և ապա Վասակի ու Վասակյանների կերպարները։

Հիմնականում ճիշտ ու փաստալից են հեղինակի մեկնաբանությունները «Վարդանանց»-ի հիմնական արժանիքների վերաբերյալ։ Բայց նա ոչ միայն վեպի արժանիքներն է բացահայտում ու գնահատում, այլև հիմնականում ճիշտ դիտողություններ է անում այս նշանակալից ստեղծագործության նկատելի թերությունների մասին, որոնք կային ոչ միայն նրա 1-ին հրատարակության, այլև առկա են նոր, հիմնովին վերամշակված 2-րդ հրատարակության մեջ։

Հեղինակն, օրինակ, լուրջ վերապահություն է անում և գտնում է, որ «Վարդանի կերպարը գերծ չի նաև թերություններից» և որ Դեմիրճյանի պատկերացմամբ տրված Վարդանի գեղարվեստական կերպարը լրիվ ու ամբողջական չէ պատմական Վարդանի համեմատությամբ։ Նա նշում է «երկու կարևոր թերություն». պատմականորեն ճիշտ ու գեղարվեստորեն համոզիչ է, որ Վարդանը պատկերվել է «իբրև ժամանակի նշանավոր գործիչ, իբրև հայերի քաղաքական ապստամբության առաջնորդ, որը, դուրս գալով նեղ ֆեոդալական դասային մտածողության շրջանակներից, հասել է Հայաստանի համապետական շահերի, երկրի ընդհանուր քաղաքական շահերի ըմբռնման դաղափարին։ Եվ հանուն դրա, նա պայքարի է ելնում պարսկական աշխարհակալության դեմ, ղեկավարելով ժողովրդա-ազատագրական պատերազմը։ Այս բոլորը ճիշտ է։ Սակայն, շարունակում է քննադատը, թերի է այն, որ Վարդանի կերպարի մեջ մենք չենք տեսնում ... ժամանակի հայ նախարարը, իր ֆեոդալական-դասային գծերով, «Մամիկոնյան նախարարական տան ներկայացուցչին»։ Ըստ քննադատի, վիպագիրն այս թերությամբ «տուրք է տվել Վարդանի կերպարն իդեալականացնելու տենդենցին»։ «Այս առավել չափով նկատելի է... Վարդանի բնտանիքի անդամների կերպարներում»,— գրում է հեղինակը և ցույց տալիս այդ թերությունը մասնավորապես Վարդանի կերպարում։ Ըստ հեղինակի՝ Վարդանի կերպարի մյուս թերությունը այն է, թե Դեմիրճյանը «...սխալ է մեկնաբանել 451 թվականի ապրստամբության, հետևաբար և Վարդան Մամիկոնյանի վերջնական նպատակի հարցը» (էջ 138)։ Նա համապատասխան մեջբերում է կատարում վիպագրի հոդվածից, ուր Դեմիրճյանը Վարդանի հիմնական նպատակը չի համարում «ազգային բացարձակ անկախություն ձեռք բերելը»։ Վարդանն, ըստ Դեմիրճյանի՝ «պարսկական գործի մեջ ծառայելով պարզ ցույց տվեց, որ դեմ չի պարսից գերիշխանությանը, որից ավելին նա չէր էլ սպասում» (բերված է «Սով. գրականություն» ամսագրից, 1943, № 4—5)։

Հեղինակն այնուհետև նշում է, որ թեև «Դեմիրճյանը ճիշտ է լուծում Վարդանի օրիենտացիայի հարցը..., որ Վարդանի օրիենտացիան եղել է ո՛չ հունական, և ո՛չ էլ պարսկական, այլ

«Հայ ժողովրդի ազգային ինքնուրույնության օրինակացիան», «բայց-ավելացնում է քննադատը,— սխալվում է Դեմիրճյանը, երբ Վարդանի նպատակը համարում է ոչ թե լիակատար անկախություն, այլ միայն «պետական կիսանկախության պաշտպանություն» պարսկական գերիշխանության տակ։

Քննադատը իր նոր մեկնաբանությամբ հաստատորեն հայտարարում է, որ Դեմիրճյանի մեկնաբանությունը «ժխտվում է պատմական վկայություններով։ Ապացուցված պետք է համարել, մեր կարծիքով, այն, որ 451 թվականին հայերի ապստամբության հիմնական նպատակներից մեկն է եղել կիսանկախ վիճակից ազատվելը... և հայկական ինքնուրույն թագավորական իշխանության վերահիմնումը»։ Այս հայեցակետից ելնելով քննադատը գտնում է , որ «պատմական Վարդանը փորրանում է վեպում,— հայ ինքնուրույն պետականության վերականգնման համար մղվող պայքարի... առաջամարտիկից նա դառնում է գոյություն ունեցող կիսանկախ պետականությունը պահպանել ձգտող մի չափավոր գործիչ ... Վարդանի կերպարն, այս տեսակետից ամբողջական չէ» — ճիշտ կերպով եզրակացնում է հեղինակը։ Բայց որոշ հակասություն կա թե՛ քննադատի և թե՛ վիպագրի այն մեկնաբանություններում, որ վերաբերում են Վարդանի ու նրա զինակից նախարարների սոցիալական-դասային շահագրգռություններին ու նրանց քաղաքական ձգտումներին՝ պարսկական բռնակալության դեմ մղված ազատագրական պատերազմում։

Այսպես, օրինակ, քննադատն 130—132 էջերում անվերապահորեն բաժանելով վիպագրի, մեր կարծիքով ոչ ճիշտ հայեցակետը Վարդանի ու Վարդանանց հայրենասիրության բնութագրման խնդրում, գրում է. «Վարդանի կերպարը վեհացնող ու գրավիչ հիմնական գծերից մեկն է հայրենասիրությունը». այս միտքը լիովին ճիշտ է, եթե իհարկե իր ժամանակի ու դասակարգի, նախարարական-ֆեոդալական հասարակարգի թերևս ամենապրոգրեսիվ այդ ներկայացուցչի հայրենասիրությունը հաստատվում է իր կոնկրետ պատմական ու սոցիալական բովանդակությամբ, առանց մոդեռնացնելու և կամ իդեալականացնելու այն։ Բայց լսենք քննադատի մտքի շարունակությունը։ Նա գրում է. «...Նշանավոր հերոսը խորապես ըմբռնում է հայոց երկրի վրա կախված ահավոր վտանգը, երկրի համընդհանուր քաղաքական շահը, նվիրված է երկրի պաշտպանության գաղափարին։ Օտար տիրապետության դեմ մղվող պատերազմը բազմաթիվ հայրենասեր հերոսներ է ծնել. այդ հերոսների փայլուն պլեադայի մեջ իր պատվավոր տեղն ունի Վարդան Մամիկոնյանը (էջ 130)։ Ապա, իբրև իր այս մտքի ճշտության հաստատումն, հեղինակը մեջ է բերում վիպագրի՝ իր երկի մեկնաբանությանը նվիրված հոդվածից մի քաղվածք, ուր ասված է. «Հարկ է նշել՝ ... որ իշխող դասակարդի մեջ գտնվեցին մարդիկ, որ վեր կանգնեցին իրենց դասակարգային նեղ շահերից և ցուցաբերեցին անձնուրաց հայրենասիրություն» (բերված է «Սովետական Հայաստան» ամսագրում, 1952 թվականի 10-ում տպված «Վարդանանք»-ին վերաբերող հոդվածից)։

Հեղինակը մերթ համերաշխ է վիպագրի հետ և բաժանում է նրա այդ հայեցակետը։ Բայց հետո նա իրավացիորեն վերաքննում է այդ հայեցակետը, փորձում ճշտել հարցադրումը և նշում է, որ վիպագիրը նախարարների կերպարներում բնդգծելով հայրենասիրական պայքարի ձգտումը, հանուն երկրի անկախության, միաժամանակ չի անդրադարձել պատմական այն իրողության արտացոլմանը, որ նախարարական դասն այդ պատերազմում հետամտում էր առաջին հերթին բավարարություն տալ իր դասային ու դասակարգային շահագրգռություններին։ Քննադատը նշում է, որ այդ բանը չենք տեսնում ո՛չ Վարդանի, ո՛չ Արտակ Մոկացու, ո՛չ Ատոմ Գնունու, ո՛չ Ներշապուհ Արծրունու և ո՛չ էլ մյուս նախարար հերոսների կերպարներում։

Քննադատն իր աշխատության հետագա մասերում նորից ու նորից անդրադառնում է այդ հարցին, մասամբ կրկնելով արդեն մեկ անգամ ասվածը և նշում Վարդանանց կերպարների նույն այդ թերությունը, բայց, տեղ-տեղ էլ՝ հակասելով ինքն իրեն, իրավացիորեն ժխտում է այդ թերության առկայությունը վեպում։ Ճիշտ է քննադատը, երբ գրում է.

«Ինչպես մենք տեսանք, ...«պարսկական արքունիքի վարած քաղաքականությունը մեծապես շոշափում էր նաև հայ նախարարության շահերը։ Ահա, թե ինչու, միանգամայն ճիշտ է վարվել հեղինակը՝ վեպում իրենց ... գործունեության լայն շրջանակներով հանդես բերելով նաև հայ նախարարության դասի պրոգրեսիվ թևի ներկայացուցիչներին ... (Ատոմ Գնունի և այլն), որոնք ըմբռնելով երկրին սպառնացող քաղաքական վտանգի ամբողջ լրջությունը, հարում են Վարդանի գլխավորած ապստամբությանը, նրա հայթանակի մեջ տեսնելով և սեփական նահանգի, և ողջ երկրի փրկության միակ ուղին»։

[1] Վ. Նալբանդյան. «Վարդանանց պատերազմը» և Դ. Դեմիրճյանի «Վարդանանքը», 1955, էջ 139—140։

«Վարդանանք»-ի վերաբերմամբ հեղինակի քննադատական դիտողություններից մի քանիսն էլ առարկելի են։ Ահա, օրինակ, նա քննադատում է Դեմիրճյանին այն բանի համար, որ վեպում Վարդանի ու մյուս հայ նախարարների կեղծ ուրացության փաստի նկատմամբ արտահայտված է ժողովրդի դժգոհությունը, բացասական վերաբերմունքը. նա անհամոզիչ, պատմական իրականությանը անհամապատասխան է համարում ժողովրդի այդ դժգոհությունը։ Նա անբնական է համարում այն, որ «նույնիսկ Առաքելը նախարարների ուրացության ակտի մեջ տեսնում է դավաճանություն»։

Բայց այլ կերպ կարո՞ղ էր մտածել այն էպոխայի ռամիկ Առաքելը և ամբողջ ժողովուրդը։ Նկատի ունենալով այն խոր համոզմունքը, որ արտահայտում է ժողովուրդը՝ հանձինս Առաքելի ու մյուսների, երբ ստացվում է նախարարների հավատուրացության լուրը (ուրացած Վասակի, ուրացած և ամբարտավան քարտուղարի քարկոծումը և այլն), Նալբանդյանը գրում է, թե՝ «դեպքերին տված այս և հարանման մեկնաբանությունները ... ցույց են տալիս», որ Դեմիրճյանի մոտ, այնուամենայնիվ, բացակայում է հետևողականությունն ու հաստատակամությունը ժողովրդի, դեպի քրիստոնեական հավատքն ունեցած վերաբերմունքի հարցում»։

Հեղինակի կարծիքով Դեմիրճյանի «հետևողականությունն ու հաստատակամությունը» տրվյալ հարցում, ըստ երևույթին, պետք է արտահայտվեր նրանով, որ նա ցույց տար միանգամայն հակառակ պատկեր, այսինքն՝ ցույց տար, թե ժողովուրդը դժգոհություն և հուզմունք չի արտահայտում նախարարների հավատուրացության առթիվ, այլ, գուցե նույնիսկ ուրախություն։ Բայց ոչ. մեր կարծիքով, քննադատը տվյալ հարցում խորապես սխալվում է և արդարացի ու հիմնավոր չի նրա դիտողությունը վիպագրի նկատմամբ, որը այստեղ էլ չի մեղանչել պատմական ճշմարտության դեմ, այլ ցուցաբերել է խորը ռեալիստական զգացողություն։

Կրոնով տարբեր ժողովուրդների պետականության միջև եղած բաղաքական պայքարը ստանում էր կրոնական պայքարի ձև, իշխող դասակարգերի քաղաքականության մեջ կրոնը դիտվում էր իբրև իդեոլոգիական կռվան։

Մարքսիստը ոչ թե ժխտում է կրոնի, որպես իդեոլոգիական գործոնի դերը, այլ կրոնական տարբեր սիստեմների մեջ բացահայտում է այն իրական-քաղաքական բովանդակությունը, որը միշտ քողարկվում է «աստվածարանական շղարշով», մանավանդ, եթե խոսքը վերաբերում է թե՛ վաղ և թե՛ ուշ միջնադարին։

Մերժելով «նահատակության» կղերական կոնցեպցիան, Վարդանին, որպես «քրիստոնեության մոլեռանդ իդեոլոգ» պատկերացնելու կղերա-նացիոնալիստական հայացքը, նրա գործունեության հիմնական շարժառիթը չհամարելով կրոնի-եկեղեցու պաշտպանության խնդիրը, միաժամանակ, սակայն, սխալ է Վարդանին ներկայացնել քրիստոնեական կրոնի ու «հավատի համար» միանգամայն անտարբեր անձնավորություն, որպիսին չի եղել և չէր կարող լինել այդ էպոխայում, քանի որ այն ժամանակ՝ ֆեոդալական հասարակության կյանքում իր գրաված դիրքով ու ակտիվ դերով պաշտոնական իդեոլոգիական հիմնարկ-կազմակերպություն հանդիսացող եկեղեցու հարցերը, սերտորեն առնչվում էին երկրի քաղաքական կյանքի, նրա ինքնուրույնության պահպանման կենսական հարցի հետ։

Տեղին քննադատելով վեպի 1-ին հրատարակության մեջ ուժեղ արտահայտված «նահատակության» կոնցեպցիան, հեղինակը պետք է նշեր այն ուշագրավ փաստը, որ Դեմիրճյան պատմաբանը հենց սկզբից ունեցել է միանգամայն ճիշտ հայեցակետ, որը չգիտենք ինչու չի արտահայտվել վեպի 1-ին հրատարակության մեջ։ Ճիշտ չէ, թե հեղինակը վեպը գրելիս՝ «կղերական հայացք է ունեցել կեղծ ուրացության հարցում։ Վիպագրին մեր կարծիքով պետք էր քննադատել ոչ թե Վարդանի ապրած հոգեկան տրագեդիայի համար, այլ այդ տրագեդիային ճիշտ բովանդակություն չտալու համար։ Մեր կարծիքով ոչ համոզեցուցիչ քննադատական դիտողություն է անում հեղինակը Վարդանի կերպարի մի այլ մոմենտի մասին։ Նա նշում է, թե «Վարդանանք»-ի նոր, վերամշակված հրատարակության մեջ իսկ «նահատակության» գաղափարը, երբեմն իրեն զգալ է տալիս մասնավորապես Վարդանի կերպարում։ Հեղինակն առանձնապես նկատի ունի պարսկական զնդանում՝ հայ նախարարների ուրացության վճռին հանգելու պատկերը («Վարդանանք», էջ 301—307), որը չի ստեղծվել հեշտությամբ, գրչի թեթև արագընթաց շարժումով։ Սխալ չէր լինի ասել, որ ամեն տեսակետից՝ Վարդանի ու նրա զինակիցների կեղծ ուրացության դեպքի ճշմարտացիորեն պատկերելը, թերևս ամենարարդ խնդիրն է եղել վիպագրի համար, մինչև իսկ նկատի ունենալով, որ այն ժամանակ, ինչպես հաստատում է Դեմիրճյանն էլ իր հոդվածում՝ հավատափոխությունը անսովոր ու արտակարգ մի երևույթ չէր։

Եվ չնայած խնդրի մեծ բարդության, այնուամենայնիվ Դեմիրճյանը արվեստագետի իր խորագույն հմտությամբ՝ ըստ ամենայնի ճիշտ է լուծել այն։ Եվ, եթե կարելի է ասել, այդ

ճակատագրական խնդրի լուծման մեջ հայրենասեր-քաղաքացին ու հոգեբան-արվեստագետը համատեղ լրջությամբ են գործել ու չեն մեղանչել ո՛չ պատմական, ո՛չ էլ գեղարվեստական ճշմարտության հանդեպ։ Մեր կարծիքով «նահատակության» կղերա-կրոնական գաղափարների կամ ինչպես քննադատն է արտահայտվում՝ «քրիստոնեական ֆանատիզմի» ոչ մի փաստ չկա։ Կեղծ հավատուրացության վճռին ծանրագույն դժվարությամբ (բոլորից հետո) միանալը և համաձայնություն տալուց հետո էլ՝ հոգեկան ծանր դրամա ապրելը, արտահայտում է ոչ թե Վարդանի «քրիստոնեական ֆանատիզմը». ոչ ամենևին. դա արտահայտում է իր ժողովրդի ազատագրական պատերազմի առաջնորդի պատասխանատու դերն ստանձնած մեծ հայրենասերի, զորավարի, իր երկրի ու ժողովրդի մահացու թշնամու՝ տվյալ մոմենտին ամենակարող ու վայրագ կամայականությանը ենթարկված, իր ժողովրդի պատմական բախտի ելքով մտատանջ քաղաքական առաջնորդի արժանապատվության զգացմունքի ուժգնությունը։

Դեմիրճյանը չի հակասել իր այն մեկնաբանությանը, որ՝ ինչպես նկատում է հեղինակը՝ իրոք՝ «Վարդանի համար էական նշանակություն չունեն կրոնական համոզմունքները»։

Վիպագիրը՝ հավատարիմ իր այդ ճիշտ մեկնաբանությանը, Վարդանի ապրած հոգեկան բարոյական «տաժանքի» («Վարդանանք», էջ 306) աղբյուրը համարում է ոչ թե նրա «քրիստոնեական ֆանատիզմը» (որպիսին չկա վեպի վերամշակված հրատարակության մեջ), այլ այն հիմնավոր վախը, որ իր ու իր զինակիցների կեղծ ուրացությունը հայրենանվեր զինվորներն ու ժողովուրդը կարող են ընդունել իբրև իսկական ուրացություն, այսինքն՝ իբրև դավաճանություն հայրենիքին և անվերապահ հնազանդություն ու ստրկացում հազկերտյան բռնակալությանը։ Վարդանին ամեն տեսակետից տանջում է այն միտքը, թե ինչու հարկադրված եղավ դիմելու կեղծ հավատուրացության, որը վիրավորել էր նրա ոչ թե կամ գուցե՝ ասենք ոչ այնքան կրոնական զգացմունքը, այլ ամենից առաջ (պայմանական առումով ասենք) ազգային արժանապատվության զգացմունքը, հայրենի երկրում իրեն անհամբեր սպասող և ազատագրական պատերազմի ելած ժողովրդի՝ իր՝ Վարդանի նկատմամբ տածած վստահության կորստի, իսկ դրա հետևանքով էլ՝ իր նվիրական գործի խափանման ահեղ վտանգի զգացումը։

Հիշենք, որ նույն զգացումով համակված Արտակը՝ Վարդանի մտատանջությունը թեթևացնելու միտումով՝ նրան ասում է, թե՝

«—Գնանք հայրենիք, կսրբենք այս կեղծիքը։

— Միայն թե դավաճան չհամարվենք. չքուլանա երկիրը,— ասաց Վարդանը,— եթե ոչ՝ հավատքը ռազմական գործերում տեղ չունի» (էջ 307)։

Հայրենասեր զորավարի այս խոսքերում լիովին բացահայտված է «քրիստոնեական ֆանատիզմից» ու «նահատակության» կղերական մտածողությունից միանգամայն ազատ, զգոն քաղաքական դործիչի հմայիչ կերպարը։ Ուստի անհիմն ու անարդարացի է «Վարդանանքի» հեղինակին այս խնդրում մեղադրել սխալի կամ անհետևողականության մեջ։ Փաստարկված չէ քննադատի դիտողությունն այն մասին, թե՝ «վեպում մի շարք (?? Ա. Ա.) տեղերում դեռևս իրեն զգացնել է տալիս ժողովրդի կրոնական զգացմունքների ֆետիշացման փաստը», «որոշ չափով կղերական դաղափարախոսության առկայությունը»։ Իրական-պատմական կյանքի ու հարաբերությունների ճշմարտացի պատկերման մեջ, հերոսների ու մասսաների գործողության մեջ նրանց կրոնական նախապաշարումների, ընդհանրապես կրոնի, որպես ժամանակի իդեոլոգիական գործոնի դրսևորումը չպետք է նույնացնել՝ քաղաքական շարժումն, իբրև կրոնական շարժում պատկերացնելու կղերական պատմահայեցողության հետ։

Հեղինակը միանգամայն ճիշտ է մեկնաբանել «Վարդանանց պատերազմի» իրական-քաղաքական բնույթը, բայց նա միաժամանակ հակառակ ծայրահեղության մեջ է ընկել՝ տենդենց արտահայտելով՝ ընդհանրապես ժխտելու կրոնի որպես իդեոլոգիական գործոնի դերը հայ-պարսկական հարաբերությունների և բուն պատերազմի ծագման, նրա ընթացքի ու ելքի մեջ։ Եթե իրար հակադիր քրիստոնեական ու մազդեզական կրոնները որևէ քաղաքական-իդեոլոգիական նշանակություն ու դեր չունեցան հայ-պարսկական հարաբերություններում, նաև վրացիների ու աղվանների և պարսիկների կյանքում ու փոխհարաբերություններում, այդ դեպքում հազիվ թե հազկերտյան բռնի ասիմիլյացիայի քաղաքականության ծրագրի կիրառումն սկսվեր հավատափոխության, մազդեզական կրոնը հայերին, վրացիներին ու աղվաններին ընդունել տալու պահանջով։

Այս հարցում հեղինակի քննադատական դիտողությունը ճիշտ է մի կետում։ Բերելով վկայություններ Եղիշեից ու Փարպեցուց կեղծ ուրացության հանգամանքների մասին, նա հիմնավոր կերպով մերժում է Փարպեցու վկայությունը և ընդունում է Եղիշեինը, որպես պատմականորեն ավելի հավաստի վկայություն, ըստ որի կեղծ ուրացությունը Վարդանի առաջարկով է

կատարվում։ Ճիշտ է, որ Դեմիրճյանը կեղծ ուրացման պատկերումը կատարել է նկատի ունենալով Փարպեցու պատմածը։ Բայց, համենայն դեպս, եթե Դեմիրճյանը հետևած լիներ Եղիշեին և կեղծ ուրացությունը պատկերեր իբրև Վարդանի առաջարկով կատարված տակտիկական բայլ, այնուամենայնիվ՝ ոչ մի չափով չէր վերանա այդ հակադիր քայլի քաղաքական նշանակությունը, թե՛ կեղծ ուրացողների և թե՛, մանավանդ՝ նրանց անհամբեր սպասող ժողովրդի երկրի համար։ Քրիստոնեությունից հրաժարվելն ու նրան հակադիր պարսկական մազդեզական կրոնն ընդունելը չէր կարող Վարդանանց զորքի ու ժողովրդի մեջ չդիտվել իբրև անվերապահ հպատակություն պարսկական բռնակալությանը, այսինքն՝ իբրև դավաճանություն հայրենիքին, այսինքն՝ իբրև հազկերտյան Պարսկաստանի բռնակալական տիրապետության դեմ արդեն սկսված ազատագրական պատերազմից հրաժարումն։ Ահա այդ նկատառումով՝ Դեմիրճյանը, մեր կարծիքով, չի սխալվել, հակասություն թույլ չի տվել՝ երբ, մի կողմից, վեպում ցույց է տվել քրիստոնեության անկայունությունը ժողովրդի ու նախարարների կյանքում ու պատկերացումներում և մյուս կողմից՝ կեղծ ուրացության քայլի դժվարությունը, նրա խորը դրամատիկ բնույթը խարիրայությամբ գերված նախարարների համար։

Վեպում արտահայտվել է Դեմիրճյանի քաղաքական ու գեղագիտական միտքը միասնաբար։ Հայրենիքի ազատագրությանը նվիրված նախարարների, ժողովրդի ազատագրական կռվի ղեկավարների հարկագիր, կեղծ ուրացությունը նա դիտել է իր քաղաքական նշանակությամբ և խորազգաց գեղագետի հմտությամբ, նա այդ ակտին տվել է համապատասխան գեղարվեստական մեկնաբանություն։

Հետաքրքրական և ուշագրավ դիտողություններ կան աշխատության 2-րդ գլխի 3-րդ հատվածում (164—206) ուր հեղինակը հանգամանորեն քննության է առնում Վասակի ու Վասակյանների պատկերումը «Վարդանանք»-ում։ Այստեղ էլ՝ ինչպես նախորդ ու հետագա հատվածներում, գործող անձանց կերպարների գեղարվեստական մեկնաբանության ճշմարտացիությունը հեղինակն ստուգում ու հաստատում կամ քննադատում ու հերքում է՝ միշտ հենվելով համապատասխան պատմական աղբյուրների վրա։

Ճիշտ է նկատում քննադատը, որ Վասակի՝ «հայոց պատմության ամենամութ» դեմքերից մեկի «գեղարվեստական կերպարի կերտումը՝ նույնիսկ առանց կղերական և բուրժուական պատմագրության հարուցած դժվարությունների, դարձյալ դժվարին մի գործ էր, որի հաղթահարումը պահանջում էր 450—451 թվականների իրադարձությունների խորը իմացություն, մեծ լրուգիցա և խոշոր գեղարվեստական տաղանդ»։

Եթե այդ դժվարությունն առկա է վիպագիր-գեղագետի համար, ոչ պակաս դժվարության է հանդիպում նաև գրականագետ-բանասերը, «Վարդանանք»-ի նման մի լուրջ ստեղծագործության մեջ կերտված այդ «ամենամութ» դեմքի գեղարվեստական կերպարի գիտական-էսթետիկական վերլուծման ու գնահատման խնդրում։

Մասնակի թերություններ, անհաջող կամ անճիշտ ձևակերպումներ կան աշխատության այս հատվածում ևս։ Բայց և այնպես հեղինակն այստեղ էլ ցուցաբերում է իր բազմակողմանի իմացությունը։ Իսկ նրա հիմնական եզրակացությունը Վասակի կերպարի վերաբերմամբ, այս է, որ Դեմիրճյանը հիմնովին վերանայելով իր նախկին («Վասակ» դրամայում) սխալ կոնցեպցիան, հաղթահարել է նախասովետահայ պատմագեղարվեստական գրականության մեջ արտահայտված այլևայլ, իրենց կարգով հակապատմական մեկնաբանությունները՝ հիմնականում ռեալիստորեն է վերարտադրել Վասակի կերպարը՝ նրա քաղաքական գործունեությունն ու վարքագիծը՝ մի շարք էական գծերի ճշմարտացի բացահայտումով։

Քննադատը հանգամանորեն ցույց է տալիս, որ «Վասակի կերպարն ևս պատրաստի հանգես չի բերվում վեպում,— նա ապրում է իր զարգացումը, զգույշ ու մորթապաշտ պաշտոնյայի վիճակից մինչև ժողովրդա-ազատագրական պայքարի շահերի եղկելի դավաճանը»։ Ըստ որում, նշում է հեղինակը, Դեմիրճյանը Վասակի կերպարը չի սահմանափակել պարսկական օրիենտացիայով ղեկավարվող Սյունյաց իշխանի ու Հայաստանի մարզպանի գործունեության քաղաքական-հասարակական շարժառիթների գեղարվեստական մեկնաբանությամբ։ Նա ընդգծել է նաև Վասակի դավաճանության «անձնական-հոգեբանական դրդապատճառները»։

Ընդհանուր առմամբ հաջողված համարելով Վասակի կերպարը վեպում՝ քննադատը, սակայն, իրավացի ու հիմնավոր կերպով առարկություններ է անում Դեմիրճյանին՝ նկատի առնելով այս բարդ կերպարի գեղարվեստական-հոգեբանական մեկնաբանության մի քանի անհամոզիչ մոմենտները, որոնք հակասում են Վասակի քաղաքական-բարոյական դեմքի մասին սովետական պատմագրության մեջ ընդունված գնահատականին։ Հեղինակը նշում է, որ Դեմիրճյանն իր վեպում մեծ ուշադրություն է դարձնում Վասակի դավաճանական • վարքագծի

«Հասարակական-քաղաքական պատճառների պատկերմանը», բացահայտում նրա սոցիալական-դասային խորթությունը, ատելությունը և վախը ժողովրդի նկատմամբ, «նրա թշնամական վերաբերմունքը Կովկասի եղբայրական ժողովուրդների դաշինքի նկատմամբ», որը դեմընթաց է նրա պարսկական օրիենտացիային և այլն։ Բայց հետագա էջերում, երբ քննադատն անդրադառնում է Վասակի կերպարի «անձնական-հոգեբանական» գծերի՝ վեպում տրված գեղարվեստական մեկնաբանությանը, այստեղ փաստորեն այնպես է ստացվում, որ նա (քննադատը) կարծես հակվում է դեպի այն սուբյեկտիվ-իդեալիստական հայեցակետը, ըստ որի՝ Վասակի դրեթե ամբողջ վարքագիծը, ներառյալ և նրա «վերջնական նպատակը» («անկախ, ուժեղ հայոց տերության ստեղծումը... պարսկական օրիենտացիայի միջոցով») պատճառաբանում է նրա «փառատենչությամբ» ու «փառասիրական կրքով»։

Բայց քննադատն, այնուհետև ճիշտ դիտողություններ է անում Վասակի կերպարի մի քանի, իրոք նկատելի՝ էական թերությունների մասին։ Դրանցից ամենակարևոր և ուշագրավ դիտողություններ վերաբերում է Վասակի կերպարում արտահայտված հակասական և իրարամերժ երկու մոմենտներին, որոնք արտահայտվել են ոչ միայն «Վարդանանք» վեպում, այլև հեղինակի «Վարդանանց պատերազմը» արժեքավոր պատմագիտական ուսումնասիրության մեջ։

Մեր կարծիքով ճիշտ է հեղինակի քննադատությունը Վասակի կերպարի հակասական «երկու կողմերի»՝ «օբյեկտիվ և սուբյեկտիվ» կողմերի անհաշտության մասին։

Դեմիրճյանը մեծ վարպետությամբ, արվեստագետի հուժկու թափով ու ցայտուն պատկերել է Սյունյաց իշխանի ու Հայաստանի մարզպանի դավաճանական գործունեությունն իր բարդ ընթացքով, իբրև Հայաստանի — հայ ժողովրդի նկատմամբ պարսկական ասիմիլյատորական դաժան քաղաքականությանն սպասարկող հայրենադավ գործունեություն։ Բայց Դեմիրճյանը հակված է Վասակի այդ գործունեությունը մեկնաբանելու, իբրև Հայաստանի պարսկական մարզպանի կերպարի «օբյեկտիվ կողմը», որը հակասում է նրա սուբյեկտիվ մտադրություններին ու ձգտումներին՝ նրա՝ «նվիրական գաղափարին», հանուն որի իրականացմանն է, իբր, ծառայում նրա մարզպանական պարսկահայաց գործունեությունը։ Դեմիրճյանի հոդվածից ու վեպից համապատասխան մեջբերումներ կատարելով՝ քննադատը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ Վասակի կերպարի մեջ ամենաթույլ մոմենտը նրա «հեռավոր» կամ «վերջնական նպատակն» է, որը ոչ մի չափով չի պատճառաբանված։

«Ծախու հոգին» (ինչպես ճիշտ կերպով և վեպի հեղինակի իսկ համոզմունքով՝ բնութագրում է Կոդակը Վասակին) չէր կարող իր երկրի համար քաղաքական անկախության իդեալ ունենալ, երբ մանավանդ նա իր ամբողջ գործունեությամբ (գաղտնի, թե բացարձակ) ընդհուպ մինչև ամբողջ հայ ժողովրդի պարսկացումը (վեպի 1-ին հրատ. մեջ՝ «թող պարսկանանք, որ հայանանք», իսկ 2-րդում՝ «թող... մինչև պարսկանալը կազատվենք պարսիկներից» սկզբունքով), անվերապահ հավատարմությամբ ծառայում է Հազկերտյան Պարսկաստանին։ Ահա թե ինչու քննադատը հիմնավոր տարակուսանք է արտահայտում մի կողմից Վարդանի՝ հայ ժողովրդի ազատագրական կռվի զորավարի և պարսկադավան մարզպան Վասակի վերջնական նպատակներին վեպում տրված մեկնաբանությունների առթիվ։ Ըստ Դեմիրճյանի՝ Վարդանը կռվում է Պարսկաստանի բռնակալական քաղաքականության դեմ միայն «կիսանկախ դրության» համար, իսկ Վասակը, որ հլու հնազանդ ծառայում է Պարսկաստանին ու վայրագորեն կատարում է նրա հայաջինջ քաղաքականությունը Հայաստանում և հենց այդ ճանապարհով, իբր թե, նպատակ ունի իրագործելու Հայաստանի լիակատար անկախությունը, կանգնեցնելով այն ոչ միայն ընդդեմ Պարսկաստանի, այլև ընդդեմ հույների (տե՛ս «Վարդանանք», էջ 416—417)։

Հիմնականում ճիշտ համարելով Վ. Նալբանդյանի քննադատական դիտողությունը Վասակի կերպարի այդ կարևոր մոմենտի մասին, միաժամանակ, պետք է դիտել, որ հեղինակը կարող էր ավելի խորացնել իր քննադատական դիտումները Վարդանի ու Վասակի կերպարների համեմատական ուսումնասիրության գծով, նկատի ունենալով, որ «Վարդանանք»-ի պատմա-փիլիսոփայությունը իր գաղափարական մարմնավորումներով խտացված է առանձնապես Վարդանի ու Վասակի կերպարներում։ «Վարդանանք»-ը, որպես գեղարվեստական մոնումենտալ ստեղծագործություն, ամենակողմանի ու լիակատար չափով մեկնաբանելու, արժեքավորելու համար, պահանջում է շատ ավելի մեծ ջանք, քան կարող է գործադրել մեկը իր մի ուսումնասիրությամբ։

Վ. Ա. Նալբանդյանի աշխատությունը թեև չի սպառում «Վարդանանք»-ն իր ամբողջության մեջ, իր բոլոր կապակցություններով, բայց նա առաջին խիզախ քայլն է այդ ուղղությամբ։ Նրա աշխատությունը ուշադրության արժանի ինքնատիպ մի գործ է մեր գրականագիտության մեջ։ ●

ԱՍ. ԱՍԱՏՐՅԱՆ